«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի 20.01.2025թ.-ի որոշման համաձայն, բանկի ներքոնշյալ սակագները գործել են մինչև 13.02.2025թ.:

Տեղեկատվական ամփոփագիր

Ավանդի հիմնական պայմանները

| **Ավանդի ներդրման արժույթը** | | | **ՀՀ դրամ** | **ԱՄՆ դոլար** | **Եվրո** |
|---|---|---|---|---|---|
| **Ավանդի ներդրման նվազագույն գումարը** | | | | | |
| Ֆիզիկական անձանց համար | | | 100,000 | 250 | 250 |
| Ա/Ձ կամ իրավաբանական անձանց համար | | | 1,000,000 | 2,500 | 2,500 |
| **Ավանդի ներդրման ժամկետը** | **Տոկոսների վճարման կարգը** | | **Տարեկան տոկոսադրույք** | | |
| 730 օր | Ամենամսյա | Քարտային հաշիվ /Բանկային հաշիվ | 9.25% | 3.5% | 2.0% |
| | | | **Տարեկան տոկոսային եկամտաբերություն** | | |
| | | | 9.65% | 3.56% | 2.02% |
| **Ավանդի առավելագույն գումարը*** | | | | | |
| Ֆիզիկական անձանց համար | | | 100,000,000 | 250,000 | 250,000 |
| Ա/Ձ կամ իրավաբանական անձանց համար | | | 200,000,000 | 500,000 | 500,000 |
| **Ավանդի գումարի ավելացում** | | | Թույլատրվում է կատարել առանց գումարային և քանակային սահմանափակման՝ ավանդի գործողության ողջ ընթացքում: | | |
| **Ավանդի գումարի նվազեցում** | | | • Ավանդի ներդրման օրվանից մինչև 90 օր ներառյալ ժամանակահատվածում ավանդի նվազեցում չի թույլատրվում,<br>• Ավանդի ներդրման 91-րդ օրվանից սկսած թույլատրվում է ավանդի գումարի մասնակի նվազեցում՝ առանց հաշվեգրված և/կամ վճարված տոկոսագումարների վերահաշվարկի: | | |
| **Ավանդի պայմանագրի խզում** | | | • Ավանդատուի պահանջով ավանդի ներդրման օրվանից մինչև 90-րդ օրը ներառյալ ժամանակահատվածում՝ ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում, իրականացվում է ավանդի ներդրման պահից մինչև ընդհատման նախորդ օրը հաշվարկված տոկոսագումարի վերահաշվարկ և վերադարձվող գումարի նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են տվյալ պահին Բանկում գործող ավանդի արժույթի ցպահանջ ավանդի տոկոսադրույքով,<br>• Ավանդի ներդրման 91-րդ օրվանից սկսած ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում հաշվեգրված և/կամ վճարված տոկոսագումարների | | |

| | |
|---|---|
| | վերահաշվարկ չի իրականացվում: |
| * Յուրաքանչյուր արժույթով թույլատրվում է ներգրավել մինչև առավելագույն գումարի չափով ավանդ:Առավելագույն գումարը գերազանցող ավանդների համար տոկոսադրույքները սահմանվում են պայմանագրային հիմունքներով: | |
| Ժամկետային ավանդ, որը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար: | |
| Հաճախորդի ցանկությամբ տոկոսները կարող են ավելացվել (կապիտալացվել) ավանդի մնացորդին: | |
| Ավանդի արժույթի փոխարկում չի թույլատրվում: | |
| Բոլոր ավանդատուներին տրամադրվում է նվեր` UNIPAY կոմունալ վճարումների միասնական համակարգի քարտ: | |
| Բանկի Ավանդատուներին և/կամ Բանկի պարտատոմսերում ներդրում կատարողներին, անվճար տրամադրվում է հետևյալ տեսակի վճարային քարտեր և քարտի գործողության ողջ ժամանակահատվածում (3 տարի) տարեկան սպասարկման վճար չի գանձվում`<br>1,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում` VISA Classic<br>10,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում` VISA Gold<br>20,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում` VISA Signature<br>50,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում` VISA Infinite | |